

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1156-26.09.2025-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկում է՝

1. Նախագծի 1-ին հոդվածում «55-ապատիկի» բառը փոխարինել «45-ապատիկի» բառով՝ հիմք ընդունելով ստորև բերված հաշվարկը.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իրանում ամրանների արտադրության պրոցեսում միայն գազի, էլեկտրաէներգիայի ծախսի և աշխատավարձի տարբերությունը Հայաստանում նմանատիպ արտադրական պրոցեսի համեմատ, կազմում է 33 հազար դրամ 1 տոննայի համար: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԵԱՏՄ անդամ պետությունների և Իրանի միջև ազատ առևտրի շրջանակներում սահմանվել է ամրանների ներմուծման 0% մաքսատուրք, ինչը նախկինում կազմում էր 5 % (շուրջ 10 000) դրամ, դրա հետ մեկտեղ, որպես հետևանք, այդ մասով նվազել է վճարվող ԱԱՀ-ի չափը նույնպես (ինչը կազմում էր շուրջ 2000 դրամ): Հետևաբար, վերը նշված բաղադրիչները ձևավորում են շուրջ 45 հազար դրամի տարբերություն 1 տոննայի հաշվարկով (ինչը հնարավորություն է ընձեռում ներմուծողին նվազեցնել ներմուծված ամրանների վաճառքի գինը):

Հարկ է նշել, որ նախագծով ներկայացված 55000 դրամ տուրքի չափի հաշվարկում ներառված է եղել նաև Իրանական արժույթի արժեզրկումը շուրջ 15-19 տոկոսով, որը կազմում է մոտ 10000 դրամ: Սակայն կարծում ենք, որ արժեզրկման գործոնը փոփոխական է և այն հաշվի առնել նպատակահարմար չէ, ուստի պետք է առաջնորդվել ազդող հիմնական բաղադրիչներով, որոնց ազդեցությամբ արժեքի տարբերությունը կազմում է 45000 դրամ:

2. Նախագծի 2-րդ հոդվածում «տարածվում է» բառերը փոխարինել «դրա գործողությունը տարածվում է» բառերով, իսկ «նկատմամբ» բառը՝ «վրա» բառով՝

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի **նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է** դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: